ԳՈՐԴՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ

ՀԱՅ ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԲԱԺՆԻ «ԳՈՐԴՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ» ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

15-ը հուլիսի, 1999 թ Թիվ. 3

«Գորդյան հանգույց» ծրագրի շրջանակներում կազմակերպված հերթական քննարկմանը մասնակցեցին

ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների պահպանման վարչության պետ Սերգեյ Շաշիկյանը,

ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի տնօրեն, Հայ էկոլոգների միության նախագահ Ռաֆայել Հովհաննիսյանը,

Սևան-Հրազդան կասկադի առաջին փոխտնօրեն Գարեգին Բաղդասարյանը

«Գորդյան հանգույց» ծրագրի տեղեկագիր
Հայաստանի ամերիկյան համալսարան
Հատուկ դասընթացների բաժին
URL:// www.aua.am/aua/extens/lectures

Ծրագրի համակարգող՝
Հրայր Զորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58

Հասցեատեր՝

ՍԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ. ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ

Քննարկման ընթացքը ցույց տվեց, որ տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչները տարբեր մոտեցումներ ունեն խնդրո առարկա հիմնահարցի լուծման առնչությամբ: Եթե բնապահպանության նախարարության ու էներգետիկների ներկայացուցիչներն ընդունելով Սևանա լճի վիճակի օրհասականությունը, այսուհանդերձ, գտնում էին, որ հարցին պետք է մոտենալ համընդհանուր, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական, խնդիրները հաշվի առնելով, ապա ըստ Հայ էկոլոգների միության նախագահի, ներկա բնապահպանական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կարծիքով, հիմնախնդիրն այնքան սուր է դրված, որ առաջնահերթությունը պետք է տրվի լճի էկոլոգիական վիճակի վերականգնմանը:

«Արդեն հինգ տարի հետո ստեղծված կլինի էկոլոգիապես անվերականգնելի, աղետալի իրավիճակ:»

Ռաֆայել Հովհաննիսյանի ներկայացրած փաստերն ավելի քան խոսուն էին: Նախ՝ Սևանա լճի գոյության 50 հազար տարվա ընթացքում, մինչև 1930-ական թվականները, երբ արդեն սկսվեց ջրի բացթողումը, լճում օրգանական նյութի ավելացում չի արձանագրվել: Այսինքն, եթե թողնվեր բնական ընթացքին, լճի մահացման, ճահճացման գործընթացը կձգվեր 100-200 հազար տարի: Սակայն ընթացիկ դարի երկրորդ կեսից, երբ լճից ջրի ելքը նախկին 100մլն խորանարդ մետրի փոխարեն հասցվեց 1000 մլն խորանարդ մետրի, պատկերը կտրուկ փոխվեց: Եթե 1935թ. լճում օրգանական նյութի քանակը կազմում էր 25 հազար տոննա, ապա 1998-ին այն հասել է 120 հազար, իսկ 1999-ին՝ 144 հազար տոննայի: Այսինքն, եթե 63 տարում օրգանական նյութի քանակն ավելացել է 5, ապա վերջին մեկ տարում՝ մոտ 1,2 անգամ: Եթե սրան գումարվեն լիճ լցվող ծանր մետաղների և թունաքիմիկատների մեծ քանակություններն, ապա, բնապահպանների գնահատմամբ, արդեն հինգ տարի հետո ստեղծված կլինի էկոլոգիապես անվերականգնելի, աղետալի իրավիճակ:

Այս ամենն իր ազդեցությունն է ունեցել նաև լճային կենսաբազմազանության վրա, ստեղծվել է համակեցության աննախադեպ իրավիճակ: Լճում գրեթե անհետացել են իշխանի 3 ռասսաները, բեղլուն, վերացման եզրին են կողակը, անգամ՝ սիգը: Զգալի փոփոխություններ են կատարվել ջրահավաք ավազանում: Չրօգտագործումը գետերին կանգնեցրել է չորացման եզրին: Սերգեյ Շաշիկյանի վկայությամբ, լիճը սնող երեք գետ՝ Վարդենիկը, Լիճքը և Մարտունին ցամաքել են: Էռոզիոն գործըն-

(շարունակությունը 2-րդ էջում)

թացներ են գնում հողային ռեսուրսներում: Սա, ինչպես նաև զանգվածային անտառահատումները կարող են հանգեցնել ջրային ավազանի անապատացման: Բնական ֆիլտրների նվազումով, լճում կտրուկ ավելանում է անողնաշարավորների և միաբջիջ ջրիմուռների, տոքսիկ նյութերի քանակը: Իսկ այսպիսի ջուրը, Ռաֆայել Հովհաննիսյանի գնահատմամբ, շուտով անպիտան կլինի ոչ միայն խմելու և լողալու, այլև ոռոգման ու էներգետիկ նպատակներով օգտագործման համար: Այս առումով կարևորվում է այն կենդանատեսակների պահպանումը, որոնք լիճը մաքրում են օրգանական նյութերից: Դրանք, նախևառաջ, սիգն ու խեցգետինն են, որոնց որսը պաշտոնապես արգելվել է մինչև 2000 թվականի ապրիլի 30-ը:

Ըստ Հայ էկոլոգների միության նախագահի, ջրափոխանակությունն ապահովելու համար հարկ չկա ընդհանրապես դադարեցնել ջրի բացթողումը: Սակայն գործընթացը պետք է կազմակերպվի կանոնակարգված, հստակ պատճառաբանված ռեժիմով: Մանսավորապես, ի տարբերություն էներգետիկների, բնապահպանները գտնում են, որ ջրի բացթողումը նպատակահարմար է կատարել ոչ թե ձմռանն, այլ ամռանն, ինչը թույլ կտա լիճը մաքրել ջրիմուռներից: Բնապահպանների գնահատմամբ, թե էներգետիկ, թե գյուղատնտեսական առումով Սևանի ջուրը ռացիոնալ չի օգտագործվում: Ավելին, այդ նպատակներով ջրի բացթողումներն առաջարկվում է փոխհատուցել Արարատյան դաշտավայրի ստորգետնյա ինքնաբուխ ջրերը օգտագործելով և ատոմային էներգետիկայում ուրանի օգտակար գործողության գործակիցը բարձրացնելով:

«Սևանի փրկության մինչ այս եղած ծրագրերի լավագույն տարբերակը դեռ մշակված չէ:»

Սևանա լիճ ջրի մուտքի և ելքի ցուցանիշները տարիներ շարունակ մնացել են նույնը, բացառությամբ արհեստական բացթողնված ջրի ծավալի: Գետերի միջոցով լիճ մուտք է գործում 800մլն խորանարդ մետր ջուր, տեղումներով՝ 500մլն խորանարդ մետր, ստորգետնյա ջրերով՝ 30-50մլն խորանարդ մետր: Ելքը գոլորշիացումից կազմում է 1000-1100մլն խորանարդ մետր, ստորգետնյա հոսքով՝ 30-50մլն խորանարդ մետր: Կառավարության որոշմամբ, 1999 թվականին արգելվել է էներգետիկ նպատակներով Սևանից ջրի բացթողումը, իսկ գյուղատնտեսական նպատակներով դուրս տրվող ծավալը 250միլոնից իջեցվել է 198միլոն խորանարդ մետրի: Սրա շնորհիվ պետք է, որ դրական հաշվեկշիռ ապահովվի: Ներկաները, սակայն, թերահավատորեն արտահայտվեցին ջրի բացթողումների վերահսկելիության առնչությամբ:

Մասնակիցներն արեցին նաև ստեղծված իրավիճակից դուրս գալու ստույգ առաջարկներ: Գարեգին Բաղդասարյանի համոզմամբ, լուծելիք առաջնահերթ խնդիրներից գլխավորը Որոտան -Արփա թունելի շինարարության ավարտն է, որին մնացել է 800 մետր: Ըստ նրա, այս պարագայում միայն կարելի է խոսել առաջիկա երկու տասնամյակում Սևանի մակարդակի բարձրացման մասին: Ռաֆայել Հովհաննիսյանը կարևորեց կառավարության կողմից հանրապետության տնտեսական զարգացման առաջնահերթ ուղղությունների հստակեցումը, քանի որ դրանից ելնելով է, որ պետք է սրբագրվեն բնապահպանական ծրագրերը: Շեշտվեցին կառավարության և խորհրդարանի կողմից բնապահպանական քաղաքականության, հանրապետության էկոլոգիական իրավիճակը բարելավող գործողությունների ու միջոցառումների առաջնահերթության և հաջորդականության ծրագրերի, Սևանա լճի և նրա բնական պաշարների ռացիոնալ օգտագործման օրենսդրական դաշտի բացակայությունը:

Վերջինի հետ իր անհամաձայնությունն արտահայտեց Սերգեյ Շաշիկյանը: Ըստ նրա, Սևանա լճի ու նրա բնական պաշարների օգտագործման բավականին խիստ ռեժիմ է սահմանված «Սևան» ազգային պարկի կանոնադրությամբ, ջրային պաշարների օգտագործումը հստակ նորմավորված է ջրային օրենսգրքով: Խնդիրն այն է, որ թույլ է այդ իրավական ակտերի կենսագործման աստիճանը, ինչն ունի թե օբյեկտիվ, թե սուբյեկտիվ պատճառներ: Վարչության պետի խոսքերով, եթե անգամ ընդունվի կատարյալ օրենք, այն չի գործի, եթե հստակ չկանոնակարգվեն կառավարման համակարգի տարբեր օղակների իրավա սությունները:

Ինչ վերաբերում է Սևանի փրկության մինչ այս եղած ծրագրերին, ապա հանդիպման մասնակիցների գնահատմամբ, լավագույն տարբերակը դեռ մշակված չէ: